# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան
(կնքման վայրը)

«28» 11 2024թ.

«05» մարտի 2024 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման ԿՊ0139 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և Դատական դեպարտամենտը (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի** 6-րդ հավելվածին կից ցանկում («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ Դատական դեպարտամենտի ստորաբաժանումներ) ավելացնել հետևյալ բաժանորդական քարտը.

| հ/հ | ID | Քարտի համարը | Սպառողի անվանումը | Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը |
|---|---|---|---|---|
| 1 | 80731005 | 1004360 | «ՀՀ ԲԴԽ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՊՄ | Երևանի ԷՍԴ «Մաշտոց» տարածք |

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2024 թվականի հոկտեմբերի 1-ից, **Կողմերի** միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Սույն համաձայնագիրը հանդիսանում է **Պայմանագրի** անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր **Կողմի** համար:

**Կողմերի հասցեներն ու ստորագրությունները**

**Մատակարար**

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 127

Լիազորված անձ՝

Դ. Ղազինյան

Կ.Տ.

**Սպառող**

Դատական դեպարտամենտ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Դեպարտամենտի ղեկավար՝

Ն. Գալստյան

Կ.Տ.

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

*0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771, www.court.am*

**N ԴԴ -1 - Ե** 9390

**«27» նոյեմբերի 2024թ.**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի**
**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԻՐԱՑՄԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՂԱԶԻՆՅԱՆԻՆ**
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արմենակ Արմենակյան փող. 127, 0011
Էլ. փոստի հասցե՝ office@ena.am)

*Հարգելի՛ պարոն Ղազինյան,*

Հայտնում եմ, որ Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի մասով էլեկտրաէներգիայի մատակարարման թիվ 1004360 պայմանագիրը միասնական թիվ ԿՊ0139 պայմանգրում (այսուհետ՝ Պայմանագիր) ներառելու անհրաժեշտություն է առաջացել:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (ՀՎՀՀ՝ 02583241) էլեկտրաէներգիայի մատակարարման թիվ 1004360 պայմանագիրը միասնական Պայմանգրում ներառելու վերաբերյալ, ինչպես նաև նկատի ունենալ, որ թիվ 1004360 պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև Պայմանագրում ներառվելը՝ 01.10.2024թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**Հարգանքով՝**

**ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և
գնումների համակարգման վարչություն,
Հեռ.՝ /+37410/ 511-777, 511-788